


**5 – 6-րդ դասարաններ**

1. Գրված են 1, 2, 3, ..., 98, 99 թվերը: Քանի՞ հատ 5 թվանշան է գրված:
  - 1) 10
  - 2) 11
  - 3) 19
  - 4) 20 :
2. Քանի՞ 0-ով է վերջանում առաջին 2013 հատ պարզ թվերի արտադրյալը:
  - 1) 0
  - 2) 1
  - 3) 10
  - 4) այլ պատասխան
3. Գրքից պոկվել են որոշ թվով իրար հաջորդող թերթեր: Պոկված թերթերից առաջին էջի համարը 213 է, իսկ վերջին էջինը՝ 312: Քանի՞ թերթ է պոկվել գրքից:
  - 1) 49
  - 2) 99
  - 3) 50
  - 4) 100 :
4. 2004 թ.-ի փետրվար ամսում կա 5 կիրակի և ընդամենը 29 օր: Գտի՛ր թե 2004թ. փետրվարի 23-ը շաբաթվա ո՞ր օրն է:
  - 1) երկուշաբթի
  - 2) երեքշաբթի
  - 3) չորեքշաբթի
  - 4) հինգշաբթի :
5. 10-ից 17 բնական բոլոր թվերը գրված են գծագրի ուղղանկյուններում այնպես, որ երկու հարևան ուղղանկյուններում հաջորդական թվեր չեն գրված: Ի՞նչ թիվ է գրված ընդգծվածում:




- 1) 15
- 2) 14
- 3) 13
- 4) 16 :

6. Վեց երեխա միմյանց հանդիպեցին և բոլորը միմյանց ողջունեցին ձեռքսեղմումով: Արդյունքում քանի՞ ձեռքսեղմում եղավ:
  - 1) 30
  - 2) 36
  - 3) 15
  - 4) 18 :
7. A բնական թվի մասին արված է չորս պնդում, դրանք են՝ A-ն բաժանվում է 5-ի, A-ն բաժանվում է 11-ի, A-ն բաժանվում է 55-ի, A-ն 10-ից փոքր է: Հայտնի է որ այդ պնդումներից երկուսը ճիշտ են , իսկ երկուսը սխալ : Այդ դեպքում A-ն հավասար է.
  - 1) 11
  - 2) 55
  - 3) 5
  - 4) այլ պատասխան :
8. A, B, C և D կետերը ուղիղ գծի վրա նշված են ինչ-որ հերթականությամբ այնպես , որ AB=13սմ, BC=11սմ, CD=14սմ, DA=12սմ: Որքա՞ն է ծայրակետերի հեռավորությունը:
  - 1) 14սմ
  - 2) 38սմ
  - 3) 50սմ
  - 4) 25սմ :
9. Ճշտախոսներից և ստախոսներից կազմված 25 հոգանոց հերթում կանգնած առաջինից բացի հերթի բոլոր մարդիկ ասացին, որ իրենց առջևում կանգնած մարդը ստախոս է, իսկ առաջին կանգնածն ասաց , որ իրենից հետո կանգնած բոլոր մարդիկ ստախոս են: Քանի՞ ստախոս կա հերթում:
  - 1) 12
  - 2) 13
  - 3) 14
  - 4) 24:
10. Չորս տարբեր բնական թվերի արտադրյալը հարյուր է: Գտի՛ր այդ թվերի գումարը:
  - 1) 14
  - 2) 15
  - 3) 18
  - 4) 30 :
11. Վերելակը կարող է բարձրացնել մեծահասակ 12 մարդ, իսկ փոքրահասակ՝ 20 մարդ: Առավելագույնը քանի՞ երեխա կարող է վերելակով բարձրանալ 9 մեծահասակի հետ:
  - 1) 3
  - 2) 4
  - 3) 5
  - 4) 6 :
12. Գտի՛ր  $6 \cdot 6 \cdot 6 \cdot 6 \cdot 6 + 5 \cdot 5 \cdot 5 \cdot 5 \cdot 5 + 9 \cdot 9 \cdot 9 \cdot 9 \cdot 9 + 231 \cdot 675 \cdot 873 \cdot 947 \cdot 2013$  թվի վերջին թվանշանը :
  - 1) 6
  - 2) 4
  - 3) 5
  - 4) 7 :
13. Երեխան 8 լուցկու հատիկներով մի անգամ կառուցեց քառակուսի, իսկ մյուս անգամ՝ ուղղանկյուն, որը քառակուսի չէ: Քանի՞ անգամ է այդ քառակուսու մակերեսի եռապատիկը մեծ ուղղանկյան մակերեսի կրկնապատիկից:
  - 1) 4
  - 2) 2
  - 3) 3
  - 4) 5 :
14. Թիվը 3-ի և 8-ի բաժանելիս ստացված մնացորդների գումարը հավասար է 9-ի: Գտի՛ր այդ մնացորդների արտադրյալը:


5 – 6-րդ դասարաններ

15. Արկղում եղած խնձորների թիվը եռանիշ է: Հայտնի է, որ այդ խնձորները կարելի է հավասարապես բաժանել թե՛ 2, թե՛ 3 և թե՛ 5 երեխաների միջև, բայց հնարավոր չէ հավասարապես բաժանել 4 երեխաների միջև: Նվազագույնը քանի՞ խնձոր կա արկղում:
16. 2012 հատ բնական թվերի գումարը հավասար է 2013-ի: Գտի՛ր այդ թվերի արտադրյալը:
17. Մաթեմատիկայից առաջադիմող 7 աշակերտներից պետք է կազմել 6 հոգանոց օլիմպիական թիմ: Քանի՞ եղանակով է դա հնարավոր անել:
18. A և B քաղաքներից, որոնց հեռավորությունը 510 կմ է, միաժամանակ իրար ընդառաջ շարժվեցին երկու ավտոմեքենա: Ավտոմեքենաներից մեկի արագությունը 90 կմ/ժ է, իսկ մյուսինը՝ 80կմ/ժ: Քանի՞ կիլոմետր կլինի մեքենաների միջև հեռավորությունը շարժումը սկսելուց 5 ժամ անց:
19. Վեցանիշ թիվը սկսվում է 1-ով և վերջանում է 7-ով: Եթե այդ թվի վերջին թվանշանը՝ 7-ը ջնջենք և գրենք այդ թվի սկզբում, ապա ստացված թիվը սկզբնականից 5 անգամ մեծ կլինի: Գտի՛ր այդ վեցանիշ թվի թվանշանների գումարը:
20. Նկարում պատկերված են երկու ուղանկյուններ , որոնցից մեկի կողմերի երկարություններն են՝ 8սմ և 10սմ, իսկ մյուսինը՝ 9սմ և 12սմ: Մզացված մասի մակերեսը 67սմ քառ. է: Քանի՞ սմ քառ. է ընդգծված



մասի մակերեսը:

- 21-25. Նկարում պատկերված է ABCD քառակուսին և նրա կողմերի M, N, P, K միջնակետերը:



Հետևյալ պնդումները ճի՞շտ են, թե՞ սխալ՝

21. ABCD և MNPK քառակուսիների պարագծերի գումարը 8 անգամ մեծ է AMK եռանկյան պարագծից:
22. Եթե ABCD քառակուսու կողմը մեծացվի 2 անգամ, ապա այդ քառակուսու պարագիծը կմեծանա 4 անգամ:
23. Եթե ABCD քառակուսու կողմը մեծացվի 2 անգամ, ապա նրա մակերեսը կմեծանա 4 անգամ:
24. MNPK քառակուսու մակերեսը 2 անգամ փոքր է ABCD քառակուսու մակերեսից :
25. ABCD քառակուսին 4 հավասար քառակուսիների տրոհելուց ստացված քառակուսիներից յուրաքանչյուրի պարագիծը 4 անգամ փոքր է ABCD քառակուսու պարագծից: